



Empowered lives.
Resilient nations.

ՆԵՐՂՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

«ԽԱԶԵՐ» Էկոլոգամշակութային հասարակական կազմակերպությունը ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի Փոքր դրամաշնորհների ծրագրի շրջանակում հրավիրում է մասնակցել կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանն ուղղված ներդրումային նախագծերի մրցույթին: Մրցույթի նպատակն է բացահայտել և ֆինանսավորել համայնքների (բնակավայրերի) սոցիալ-տնտեսական կարիքներին համահունչ բնապահպանական ուղղվածության նախագծեր:

Մրցույթի ընդհանուր բյուջեն կազմում է 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Հավանության արժանացած յուրաքանչյուր նախագծի իրականացման համար նախատեսվում է տրամադրել մինչև 20,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի աջակցություն նյութական/բնեղեն տեսքով այն համայնքներին (բնակավայրերին), որտեղ բնակիչները պատրաստ են ստեղծել Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ (տե՛ս կից ուղարկված բովկետը): Նախագծի ընտրության պարտադիր պայմաններից է համայնքի (բնակավայրի) կողմից և/կամ այլ աղբյուրներից դրամական և/կամ բնեղեն տեսքով համաֆինանսավորման առկայությունը:

Մրցույթին կարող են դիմել ՀՀ փոքր քաղաքային և գյուղական համայնքներում (բնակավայրերում) տեղի բնակչության մասնակցությամբ ձևավորված քաղաքացիական նախաձեռնող խմբերը:

Կից բերված ձևաչափով կազմված ներդրումային նախագծերը կընդունվեն մինչև մրցույթի համար նախատեսված բյուջեի սպառվելը: Կարիքի դեպքում «ԽԱԶԵՐ» ՀԿ-ն հանձն է առնում հայտատուներին տրամադրել տեխնիկական, փորձագիտական, խորհրդատավական ծառայություններ Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների ստեղծման և ներդրումային նախագծերի մշակման հարցում:

Հարցերով և լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

Հեռ.՝ 091 240 081: 093 737 279: 093 540 944

Էլ.փոստ՝ info@khazer.org, a.hambartsumyan@khazer.org:

Կայք՝ www.khazer.org

ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՁԵՎԱԶԱՓ
(ՀԱՅՏԻ ՁԵՎ)

1. Ներդրումային նախագծի հեղինակը:
2. Ներդրումային նախագիծն իրականացնող կառույցը, կոնտակտային տվյալները:
3. Ներդրումային նախագծի իրականացման վայրը:
4. Ներդրումային նախագծի համառոտագիր՝ ոլորտը, նպատակը, ակնկալվող արդյունքը, իրականացման ժամանակացույցը (ոչ ավելի քան 1 էջ):
5. Կարիքի հիմնավորումը, առկա իրավիճակը և նախագծի իրականացման համար առկա նախադրյալները (ոչ ավելի քան 1 էջ):
6. Մասավոր բնապահապանական նշանակությունն ու ազդեցությունը (ոչ ավելի քան 0,5 էջ):
7. Տեխնիկա-տնտեսական հաշվարկ/նախահաշիվ:
8. Ներդրումային նախագծի արդյունքի շարունակականության ապահովման հիմնավորումը և երաշխիքները (ոչ ավելի քան 0,5 էջ):
9. Մեփական և հնարավոր հարակից կամ հավելյալ ներդրումների ձևը և չափը:
10. Հնարավոր ռիսկերը (ոչ ավելի քան 0,5 էջ):
11. Նախագծի մրցունակությանը նպաստող լրացուցիչ տեղեկատվություն՝ օր. նախկինում հաջողությամբ իրականացված նախագծերի մասին:

Ներդրումային նախագծին կից անհրաժեշտ է ներկայացնել հեղինակի լիազորությունը հաստատող փաստաթուղթ՝ համայնքի կամ բնակավայրի բնակիչների ընդհանուր ժողովի կամ ստորագրահավաքի արդյունքների արձանագրություն: